

**Տեղեկատվություն 2012թ հունվար-դեկտեմբեր ամիսներին  
ՀՀ Լոռու մարզի և և ԱՊՀ անդամ պետությունների վարչատարածքային միավորների միջև  
համագործակցության վերաբերյալ**

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	Ռուսաստանի Դաշնության Կոստրոմա քաղաքի իշխանությունների առաջարկությունը ՀՀ Վանաձոր քաղաքի իշխանություններին քույր քաղաքներ դառնալու համագործակցության վերաբերյալ	2012թ դեկտեմբեր	ՌԴ Կոստրոմա քաղաքի իշխանությունները ցանկություն են հայտնել համագործակցություն ծավալել ՀՀ Վանաձոր քաղաքի իշխանությունների հետ՝ առաջարկելով հոչակել Կոստրոմա և Վանաձոր քաղաքները քույր քաղաքներ: Մարզպետարանը առաջարկությունը փոխանցել է Վանաձորի քաղաքապետարանին, ուսումնասիրելու եւ հնարավոր համաձայնությունը տալու նպատակով: Քննարկման արդյունքում Վանաձորի քաղաքապետարանը տվել է իր համաձայնությունը, որն ուղարկվել է ՀՀ ԱԳՆ՝ ռուսական կողմին փոխանցելու համար:
2	Լիտվայի Հանրապետության Շյաուլյայի իշխանությունների առաջարկությունը ՀՀ քաղաքներից որեւէ մեկի հետ համագործակցություն հաստատելու վերաբերյալ	2012թ դեկտեմբեր	Նոյեմբեր ամսին Լիտվայում ՀՀ դեսպանը հանդիպել էր Շյաուլյայի քաղաքապետի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Շյաուլյայի և Հայաստանի քաղաքներից մեկի հետ գործնական կապեր հաստատելու հնարավորությունը: Դեսպանությունն առաջարկել էր համագործակցության առաջարկը քննարկել Վանաձորի քաղաքապետարանի հետ: Մարզպետարանն առաջարկությունը փոխանցել է Վանաձորի քաղաքապետարանին, ուսումնասիրելու եւ հնարավոր համաձայնությունը տալու նպատակով: Վանաձորի քաղաքապետարանում քննարկվել էւ ընդունվել է հնարավոր համագործակցության առաջարկությունը, որն ուղարկվել է ՀՀ ՏԿՆ:

3	<p>Ռուս-Հայկական միջտարածաշրջանային համագործակցության Երկրորդ համաժողով «Ռուսաստան-Հայաստան միջտարածաշրջանային երկխոսություն 2012»</p> <ul style="list-style-type: none"> <li>Համաձայնագիր համագործակցության և փոխգործունեության մասին «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության և ՀՀ Լոռու մարզի միջև 2012-2015թթ</li> </ul>	<p>2012թ հոկտեմբերի 12-13</p> <p>ՀԻՕ- C579/12 13.10.2012թ. Ք. Երևան</p>	<p>Ս/թ. հոկտեմբերի 12-13-ին Լոռու մարզի պատվիրակությունը մասնակցել է Ռուս-Հայկական միջտարածաշրջանային համագործակցության Երկրորդ համաժողովին:</p> <p>ՌԴ Թաթարստանի հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարի առաջին տեղակալ Ռ. Կաբիրովի հետ մարզպետը քննարկել է թեթև արդյունաբերության ոլորտում ՀՀ Լոռու մարզի և ՌԴ Թաթարստանի հանրապետության հնարավոր համագործակցության հարցեր:</p>
4	<p>ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ստեփան Սուխորենկոյի այց Լոռու մարզ</p>	<p>2012թ փետրվարի</p>	<p>Փետրվարի 27-ին մարզպետ Ա.Նալբանդյանը դեսպանի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձևափոխվել Բելառուսի Վիտեբսկի մարզի հետ նոր համագործակցության սկիզբ դնել:</p> <p>Մարտի 6-ին պաշտոնական հրավերք է ստացվել ս.թ.մայիս ամսին մարզպետի գլխավորությամբ Լոռու մարզի պատվիրակության այց Վիտեբսկի մարզ:</p>
5	<p>Համագործակցություն Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև</p>	<p>2012թ մայիս</p>	<p>Մայիսի 26-ին Վիտեբսկի մարզի Պոլոցկ քաղաքում Ալավերդու քաղաքապետի եւ Պոլոցկի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահի կողմից կնքվել է «Պայմանագիր ՀՀ Ալավերդի եւ Բելառուսի Հանրապետության Պոլոցկ քաղաքների եղբայրության»</p>
		<p>2012թ հուլիս</p>	<p>2012թ հուլիսի 16-ից 18-ը Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզ էր մեկնել Լոռու մարզի պատվիրակությունը, մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ: Փոխադարձ համաձայնությամբ երկու մարզերի միջև կնքվել է «Համաձայնագիր Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև»:</p> <p>Եղբայրացման եւ համագործակցության պայմանագրեր են կնքվել նաեւ Վանաձոր-Վիտեբսկ, Սպիտակ-Օրշա քաղաքների միջև:</p>
		<p>2012թ հոկտեմբեր</p>	<p>Փոխադարձ այցով հոկտեմբերի 4-ից 8-ը Լոռու մարզ էր ժամանել Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի պատվիրակությունը եւ տեղում՝ կնքվեցին պայմանագրեր</p>

			<p>Ստեփանավան-Բրասլավ քաղաքների, Տաշիր քաղաքի և Լեպեղի շրջանային գործադիր կոմիտեի միջև:</p> <p>Հետագա երկկողմ արդյունավետ համագործկցության համար նշված քաղաքների կողմից կազմվում են գործողությունների ծրագրեր</p>
--	--	--	---

**Տեղեկատվություն 2012թ հունվար-դեկտեմբեր ամիսներին  
ՀՀ Լոռու մարզի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև  
համագործակցության վերաբերյալ**

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Անրի Ռենոյի այցը Լոռու մարզ	2012թ մարտի 28	<p>Այցը ճանաչողական նպատակ ուներ: Մարգարետ Ա. Նալբանդյանի մոտ հանդիպման ժամանակ խոսվել է հայ-ֆրանսիական համատեղ իրականացված ծրագրերի եւ հետագա համագործակցության վերաբերյալ: Դեսպանն այցելել է ՎՊՄԻ, հանդիպել ուսանողներ հետ, ապա մեկնել է Ստեփանավան փրկարարական կենտրոն:</p> <p>Լոռին ընտրվել է պիլոտային մարզ, կամավոր հրշեջների եւ փրկարարների վերապատրաստման ծրագրեր իրականացնելու համար, Ստեփանավան քաղաքում ՊԱԿԱ-ի ֆինանսավորմամբ արդեն բացվել է փրկարարական կենտրոն, որը հազեցած է նոր տեխնիկայով եւ սարքավորումներով:</p>
2	Լոռու մարզը 2011թ նոյեմբերի 13-ից Ֆրանկոֆոն Ռեզիոնների Ասոցիացիայի լիիրավ անդամ է	2011թ նոյեմբերի 13	<p>Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի մեկամսյակի շրջանակներում, ս/թ մարտ ամսից մարզի դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում (Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ) կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ</p>

<p>3</p>	<p>Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր</p>	<p>2008թ հունիսի 18</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆրանսիայի Հանրապետության Մարսել քաղաքում ստորագրված համագործակցության շրջանակային պայմանագրի շրջանակներում այս տարվա մարտի 20-21-ը երկօրյա այցով Վանաձորում էր ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդի պատվիրակությունը, նախագահի խորհրդական Ժերար Բոդինյեի գլխավորությամբ:</li> <li>• Հանդիպման ընթացքում քննարկվել են հարցեր երկու մարզերի հետագա համագործակցության վերաբերյալ.</li> <li>• Ֆրանկոֆոնիայի զարգացման ուղիներ</li> <li>• Տուրիզմի զարգացում, այդ թվում ` գյուղական տուրիզմ</li> <li>• Ռիսկերի կանխատեսում եւ կառավարում</li> </ul> <p>2012 թվականի ծրագրերի ամրապնդում (գյուղատնտեսություն, առողջապահություն, կրթություն, արտակարգ իրավիճակներ):</p> <p>Ապրիլ-մայիս ամիսներին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում կազմակերպվել է Ֆրանսիական «Մոնդ» թերթի ծաղրանկարիչ Ժան Պլատյուի ցուցահանդեսը «Նկարիչ Խաղաղություն» խորագրով:</p> <p>Հունիսի 3-7-ը ՊԱԿԱ-ի Միջազգային կապերի եւ Միջերկրական համագործակցության պատասխանատու Գիյոմ Լալանժի գլխավորությամբ մարզում ուսումնասիրություններ կատարեցին անասնաբուծության, տուրիզմի եւ ագրոտուրիզի բնագավառների փորձագետները, որոնց առաջարկները քննարկվեցին մարզպետարանում՝ Լոռու մարզում 2012-2014թթ համատեղ իրականացվելիք ծրագրերի գործողությունների պլանի մշակման համատեքստում:</p>
----------	--	-------------------------	--

<p>3</p> <p>Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր</p>	<p>2012թ հոկտեմբերի 1-6</p>	<p>Հոկտեմբերի 1-ից 6-ը ՊԱԿԱ-ի ռեզիդենտ խորհրդի հայաստանյան պատասխանատու Լոռա Կառլոնի գլխավորությամբ Լոռու մարզ էին ժամանել տուրիզմի զարգացման երկու փորձագետներ, որոնք ուսումնասիրելով տուրիզմի զարգացման հնարավորությունները մարզի 5 տարածաշրջաններում՝ առաջարկեցին Թումանյանի տարածաշրջանում ստեղծել տուրիզմի զարգացման կենտրոն:</p> <p>Քննարկվեցին նաև 2012-2014թթ ՊԱԿԱ-ի եւ Լոռու մարզերի միջեւ համագործակցության գործողությունների ծրագիրը:</p>
	<p>2012թ դեկտեմբերի 9-13</p>	<p>Դեկտեմբերի 9-ից 13-ը Լոռու մարպետ Ա.Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնել էր Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեզիդենտ Այցի ընթացքում երկու մարզերի ղեկավարներ Ա.Նալբանդյանն եւ Միշել Վոզելը ստորագրեցին «2012-2014թթ համագործակցության համաձայնագիր», որը նախատեսում է 175.0հազ եվրո արժողությամբ ներդրում Լոռու մարզում տուրիզմի եւ անասնապահության ծրագրերի իրականացում Ֆրանկոֆոնիայի զարգացմամբ:</p>
	<p>2012թ, փետրվարի 29</p>	<p>Ֆրանսիական DSF (Ցավեր առանց սահմանների) ծրագրի պատասխանատու, մանկահոգեբույժ Ժերար Ռոբենի այցը Վանաձոր: DSF կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» ՀԿ-ի միջոցով կազմակերպվել էր դեռահասների վարվելակերպի եւ հոգեբանական դժվարությունների վերաբերյալ կոնֆերանս – քննարկում Վանաձոր քաղաքի բուժհաստատությունների, մանկատան եւ ինամքի կենտրոնի հոգեբան-մասնագետների եւ շահագրգիռ այլ հաստատությունների մասնագետների մասնակցությամբ:</p>

		2012թ-2013թ սեպտեմբեր	Հայ մասնագետների հմտությունների խորացման, երեխաների բժշկահոգեբանական և սոցիալական խնդիրները հոգալու և դրանք կանխելու նպատակով «Նոենի» ՀԿ-ն 2012թ. սեպտեմբեր ամսից Վանաձոր և Ամրակից համայնքներում շարունակում է իրականացվել սոցիալական և առողջապահական մարմինների (մանկատուն, երեխաների խնամքի կենտրոն, պոլիկլինիկաներ, մասնագիտացված դպրոցներ) մասնագիտական ու տեխնիկական ունակությունների հզորացման, նոր սարքավորումների տեղադրման ու շահագործման, ինչպես նաև տարբեր գործընկերների միջև աշխատանքների համակարգման ծրագրեր:
4	Ֆրանսիայի Պրովանսի համալսարանի, Էքս-Մարսելի Ակադեմիայի մանկավարժական համալսարանական ինստիտուտի եւ Վանաձորի պետական մանկա-վարժական ինստիտուտի միջև կնքված «Փոխանակումների խթանման եւ զարգացման համար» համաձայնագիր	2008-2012թթ	2012թ մարտի 11-ից 15-ը Ֆրանսիայի Մարսել քաղաքում կազմակերպված «Ջրի համաշխարհային ֆորումին» մասնակցել են Վանաձորի Պետական մանկավարժական ինստիտուտի եւ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղի ֆրանսերեն լեզուն տիրապետող մեկական ուսանողներ
5	Հայաստանում Նիդերլանդների փոխդեսպան Անջել Սամուրայի այցը Լոռու մարզի Սպիտակ քաղաք	2012թ մարտի 20	«Սպիտակ-ֆերմեր» ՀԿ-ի և Նիդերլանդական ՊԱՄ կազմակերպության միջև համագործակցության համաձայնագրի ստորագրում, որի նպատակը՝ մարզի Սպիտակի տարածաշրջանում գյուղատնտեսության ու մասնավորապես անասնապահության զարգացումն է

6	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և «ԳԲՖ» կազմակերպության միջև 2008 թվականին ստորագրված եռակողմ համագործակցության պայմանագրի շրջանակներում</p>	2008թ	<p>Շարունակվում է «ԳԲՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության առաքելությունը Լոռու մարզում, որի ներկայացուցիչները իրականացնում են ՎՊՄԻ-ում, ԵԿՏԱ-ի Վանաձորի մասնաճյուղում և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանում, ինչպես նաև Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող դասախոսների և ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:</p>
		2012թ հոկտեմբեր	<p>«ԳԲՖ»-ի ներկայացուցիչները (ֆրանսերեն լեզվի մասնագետներ) ֆրանկոֆոնիայի զարգացմանը զուգընթաց մարզի Թումանյանի տարածաշրջանում աշխատանքներ են սկսել նաև տուրիզմի զարգացման համար: Պատրաստվել է տեղեկատվական թերթիկ և նախագծվել են տուրիստական արահետներ 5 համայնքների համար (Ախթալա, Հաղպատ, Ալավերդի, Արդվի, Օձուն):</p>
7	<p>Համագործակցություն ՀՀ Լոռու մարզի և ՉԺՀ Շանսի նահանգի միջև</p>	2011թ նոյեմբեր	<p>ՉԺՀ Շանսի նահանգի հետ ստորագրված համագործակցության արձանագրության շրջանակներում ՀՀ ՏԿՆ է ներկայացվել Լոռու մարզից հնարավոր համագործակցությունների վերաբերյալ ծրագրեր, չինական կողմին փոխանցելու նպատակով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վալեքս խմբի նոր հանքավայրի հետազոտման, շահագործման բիզնես ծրագիր</li> <li>2. Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի զարգացման բիզնես ծրագիր, Յվն ԱՄՆ դուլար արժողության ներդրում Մայիսին իրականացվել է Վալեքս խմբի պատվիրակության այցը Չինաստան</li> </ol>



8	Վանաձոր – Լայպցիգ (Գերմանիայի Դաշնություն) քաղաքների համագործակցություն	2011թ	2012թ հունիսի 18-ից 20-ը Վանաձորում էր Գերմանիայի Լայպցիգ քաղաքի պատվիրակությունը: Այցի նպատակն էր երկու քաղաքների միջև հետագա համագործակցության արդյունքում Փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցման կենտրոնի ստեղծման համար նախնական աշխատանքների ուսումնասիրություն
9	Ալավերդի – Դաուգավայիլս (Լատվիայի Հանրապետություն) եղբայրության պայմանագրի կնքում	2012թ	Հոկտեմբերի 1-ից 3-ը Ալավերդի քաղաք էին ժամանել Լատվիայի Հանրապետության Դաուգավայիլս քաղաքի պատվիրակությունը քաղաքային դումայի նախագահ Կուլակովայի գլխավորությամբ: Հոկտեմբերի 2-ին կնքվեց «ՀՀ Ալավերդի եւ ԼՀ Դաուգավայիլս քաղաքների եղբայրության պայմանագիր»
10	Ալավերդի-Քոբուլեթի (քույր քաղաքներ)		Հունիսի 1-ից 2-ը Ալավերդի քաղաքում մեծ շուքով տոնվել է Քոբուլեթի – Ալավերդի համագործակցության 5-ամյակը: Տոնախմբությանը մասնակցել է Քոբուլեթիից ժամանած պատվիրակությունը:
11	ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր համատեղ դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչի այցը Լոռու մարզ	2012թ	Հոկտեմբերի 23-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր համատեղ դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչը: Նա հետաքրքրված էր մարզի զարգացման ծրագրերով եւ բիզնեսի զարգացման հնարավորություններով մարզում: Նա նշեց, որ բրիտանական կառավարությունը հետաքրքրված է իր երկրի գործարարության ընդլայնման եւ տարբեր երկրներում ներդրումների իրականացմամբ, այդ թվում եւ Հայաստանում:
12	Ռհոն Ալպերի Հայաստան հանձնախմբի ներկայացուցիչների այց Լոռու մարզ	2012թ	Հոկտեմբերի 21-ին Լոռու մարզ էր ժամանել Ֆրանսիայի Հանրապետության Ռհոն Ալպերի Հայաստան հանձնախմբի նախագահ, Ռհոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի ընտրված պաշտոնյա, Բուրժե դյու Լաք քաղաքի քաղաքապետ Էդուարդ Սիմոնյանը, Ռհոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի Եվրոպայի, արտաքին հարաբերությունների և

			<p>համագործակցության բաժնի պատասխանատու Աննա Ֆիորինի Բերիտոի հետ:</p> <p>Մարզպետարանում կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են Լոռու մարզում իրենց կողմից ֆինանսավորված ծրագրերի կատարման ընթացքը: Դրանք էին՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Էկոտուրիզմ Ստեփանավանում - երկու ծրագիր</li> <li>- կենտրոնի կառուցում Դսեղում</li> <li>- կոոպերատիվի հիմնում և չորանոցի կառուցում Օձունում</li> <li>- ֆրանսախոսության ծրագրեր Վանաձորում և Ստեփանավանում,</li> <li>- քաղաքապետերի այց Ռեոն Ալպ</li> </ul> <p>Նշվեց, որ ակնկալվում են այդ ծրագրերից որոշ մասի շարունակություն 2013թ-ին:</p>
13	Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի փոխնախագահի հանդիպումը Լոռու մարզպետի հետ	2012թ	Գերմանիայի Դաշնային Բունդեսթագի փոխնախագահ դոկտոր Վոլֆգանգ Թիրզեի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 3-ին ճանաչողական այցով ժամանել էր Լոռի, նպատակ ունենալով ծանոթանալու մարզի արտադրական պոտենցիալին, առկա հիմնախնդիրներին և Գերմանական կառավարություն կողմից մարզում իրականացվող ծրագրերի ընթացքին:
14	Լոռու մարզի Արջուտ գյուղական համայնքի եւ ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության դեսպանության միջեւ կնքված «Համայնքային ներդրման պայմանագիր»	2012թ հուլիսի 3	Լեհաստանի դեսպանությունը Արջուտ համայնքում համաֆինանսավորմամբ (10 800 Եվրոյին համարժեք դրամ) աջակցում է «Արջուտ գյուղի ոռոգման ջրագծի վերակառուցում» ծրագրին
15	Լոռու մարզում ՀՀ- ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում Թվինինգ ծրագրի արտագնա սեմինար	2012թ հուլիսի 25	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ ՀՀ- ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում «Մրցակցային եւ պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» Թվինինգ գործիքի կիրառմամբ, նպատակային ծրագրի շրջանակներում, Վանաձորում քաղաքում Գերմանիայի եւ Լիտվայի գործընկերների հետ համատեղ կազմակերպվել էր միջոցառում պետական օժանդակությանն առնչվող հարցերի վերաբերյալ, որի նպատակն էր մարզպետարանի եւ համայնքների իրազեկվածության բարձրացումը

